

մեռած էր. և կր սուկայինք շատերուն հետ տեսնելով որ առանց սրբութեան կր մեռնի, այնքան թախանձանօք և ժողովեամբ խնդրելէն զինի. Ըստ Մատուած որ կր կամեր անոր այնքան արդար եւ եռանդուն իղձը վարձաւ արեւ, գրեթէ հրաշքով մը բարբոսին այդ ջղաձգութիւնը գաղտնեցունելէն վերջը, իւր բարբ դատողութիւնը իրեն դարձուց, այնպէս որ կարծես թէ կատարեալ առողջ էր. որուն վերայ Պ. Եղիշիկեանը Սրբութիւնը հետը մտաւ եղբորս սենեկին մէջ և աղաղակեց. « Ընչա այն՝ որուն այնքան ցանկացար ու Սուրբ բաւական եղաւ զանիկայ արթնցունելու, և երբ Պ. Ե. մտեցաւ որ սայ, վերջին ճիշդ մը ըրաւ եղբայրս ելաւ և կէս նստաւ որ յարգանք ընդունի Սրբութիւնը. Պ. Ե. հաւատոյ գլուխը խորհրդոց վրայ քանի ժը բան հարցուց սովորութեան համեմատ, որուն եղբայրս յստակ կերպով պատասխանեց. « Ընչ, Պ. բարբ արտանց կը հաւատամ այս ամենուն ու յետոյ ընդունեց Սրբութիւնն ու վերջին օծումը այնպիսի փափուկ գգայմամբ, որուն արտասուքը վկայեցին. Ըմենուն պատասխանելէն և Պ. Ե. էն շորհակալ ըլլալէն զինի, երբ անիկա սրբաուսուփով զինքը օրհնեց, ըսաւ՝ « Թող Մատուած զիս երբէք չըլբանէ ու Սուկայ իւր վերջին խօսքը եղաւ, վասն զի Սրբութեանէն քիչ մը յետոյ ջղաձգութիւնը սաստիկ կերպով բռնեց զանիկա և այլ եւս չը թողուց մինչեւ իւր մահը, որ եղաւ 1662 օգոստոս 19 ին, առաւօտեան ժամանակ, և հաւասակաւ 39 տարի 2 ամիս. »

Ս. Ս. Ս. Իրեքանի
Տէրմանի բարձր

ԲԱՆԱԿԱՐԿԱԿԱՆ

« Պարտ է սանձել զբարկութիւն թէպէտ և 'ի վերջինս բարբոսաւ »
Հովնաթ

Ի սկզբանէ անախ հետամուտ գալով մարդկան բարւոյն և օգտակարին փութացին գերիմաստք 'ի նոցանէ 'ի հանձարոյն իւրեանց նշխարս պատուականս թողուլ և ապագայից 'ի դիւրութիւն նոցին և յօգուտ անձանց զարոց զփորձ օգտակարութեանն և զանհրաժեշտ պիտանութիւն ի կրեանք իսկ առ ին 'ի կենցաղավարութեան իւրեանց և աւանդեցին մեզ խրատս և պատուէրս պիտանիս և օգտակարս 'ի կեանս մերում:

Յորոց և Հովնաթ գերահանձարն 'ի քերթողս նախնի դարուց որ բարեխրատ հանդիսացաւ յամենայն 'ի բաւնչս իւր կշտամբիչ մղութեանց եւ գրուածիչ առարկութեան, և ամենայն որ միանգամ զնէս ընթացաւ բանից նորս, արգասիս պատարուն կթեաց և շահեցաւ գոգցեա զամենայն վկարեւորս՝ կենցաղավարութեան ու շինչ երբէք մնասեալ, բազում անգամ բազումս լիճեաց իմաստուն բանս և ազդու խրատս, որք անշուշտ մատուցանեն զօգուտ գործարողին յորոց մի է և այս անտուտ լիճիս թէ, « Պարտ է սանձել զբարկութիւն թէպէտ և 'ի վերջինս բարբոսաւ »

Ըստիկն թէպէտ յախմայս ներգործէ երբեմն կիրք բարկութեան 'ի մարդիկ, և բազմցս ըստ սահման համբերութեան անցանեն, սակայն ունին և նոքա զօրութիւն բանի, նոյնին հաւատարմեալ կրից, 'ի բաց արասցեն յանձանց զպատուհասն որ անշուշտ ունի հետեւիլ բարկութեան. թէ և սաստկագոյն եւս իցէ յուղումն կրից և թէ իցեն ևւս իրաւացի առ իժք

բարկանայր : դարձեալ մի հարստու
կիլ նմա ք այլ վեհանձնարար իշխել և
Թոյլ տալ բանին որ արդար իշխանն
է ք զի հրամայեոցէ կրիցն դադարել
առ վայր մի մինչև խորհուրդ կայրի
խնաստութիւնն զմանէ վասն որոյ
յուզեցան :

Վասն զի յուզեալ միանգամ կրից
բարկութեան ք ոչ կարէ բանն հետա
դոտել զճնարտութիւնն . քանիք բա
նըն որ ՚ի մարդ , նա որոշէ ընդ օգ
նասկարն և ընդ զնասակար , նա գիտէ
իրաւունս առնել զոկերցն . յայսմ ահ
նետեւ տեսանի ամենեցուն ճնար
տութիւնն անմխտելի իրբեւ ՚ի հա
յելուք . և զի բանին չիք տեղի ՚ի կիրոս
վասն զի որդէս սիլք կատաղք շար
Վեալք ՚ի սաստկաշունչ հողմոյ հիւ
նիսայնոց սաստկացոյն իմն ծփանօք և
մակընթացութիւն յանկարծակի ծած
կեն զզուարձակ ձեռնելիս ծովափնեայս
և որպէս ամպ Թանձրամած և Թուխ
ձգեալ և տարածեալ ընդ անհուն ըն
դարձակութիւն միջնորտին գողա
նայ յուսոց զհորիզոնն պայծառաշող
ակնահաճոյ անթափանց ՚ի ճառագառ
թից արփենիցն , որպէս և յուզումն
կրից քողարկեալ ծածկէ զտեսութիւն
մտաց , որով Թանձրանայ խաւարն ՚ի
մարդ ք և հատեալ զթել իմացման և
ճանաչողութեան դադար տայ առ
ժամ մի իմացականին ներգործու
թեանց , որով միայն մարդն ՚ի մարդ
որոշեցաւ . ուստի գործէ այնուհե
տեւ վայրապար ըստ Թելադրութեան
բնութեան , զոր անմիջական կորուստ
մարդկութեան համարիլն չէ անտեղի ,
ըստ որում բնագրումն է անդ գործող
և ոչ կամայականն ազդեցութիւն . զի
ուր չիք ներգործութիւն մտաց , չիք
անդ կամական ներգործութիւն մարդ
կան . ուր չի մարդ յայլ նոր իմն ա
րարած , աեսակ ինչ կենդանւոյ յա՛

ւելեալ ՚ի կարգ մարդոց . որում նմա
նի արդեօք արտաքին հանգամանօք
ինչ և կազմութեամբ , բայց չունի
զէական տարբերութիւն նորին , եւ
անարժան այնմ մեծի անուան , որ ՚ի
ձեջինս համարի երբեմն ՚ի տգիտաց մե
այն : Արդ որովհետեւ ՚ի յուզմունս
կրից դադարին ՚ի մարդն ներգործու
թիւնք մտաց , ապա չիք բանին տեղի
՚ի նմա ք և զի բարկութիւն ոչ այլ ինչ
է՛ բայց եթէ յուզումն կրից , ապա
բարկացոյն ՚ի բարկութեան իւրում՝
հաւասար անասնոց անմասն է ՚ի բա
նէ , և ոչ կարացեալ որոշել ընդ շա
րբն և ընդ բարի՝ միլ ՚ի բերմանէ բը
նութեան յորում գրեթէ սխալէ յա
րածամ , զնասեալ ընկերին և վտան
գեալ զանձն իսկ : Առ եթէ դէօք ՚ի
յօգտակարն ձգեցոցն երբէք , դար
ձեալ ոչինչ շահ անձին է նորա , զի
ոչ ունի զգալ ինչ բերկրութիւն , ՚ի
սրտին զոր մի միայն մատակարարէ
խոհական խորհրդածութիւնն . և զի
որոշմունք իւր չեն որ յանգին ՚ի կա
տար , առ այնօք յաղպեցաւ այն ՚ի
բերմանէ բաղդի , և վաղիւ գէպք կոր
ծանեն զայն , ուստի այնուհետեւ ոչ
այլ ինչ ունի , եթէ ոչ ցաւ և զիղջ
անօգուտ :

Իսկ ընդ հակառակն եթէ երկա
նամտեալ սանձ ՚ի կղակ արկէ նորին
ամեհացեալ կրից համբերութեամբ
վեհանձնակոն , չիք այլ եւս տարակոյս
զի միտք ոչինչ վտանգեալ ուստեք
պատաղեցի ընդոյր յընտրութիւն
բարւոյն , և խորհուրդ ՚ի մէջ առեալ
նուրբ հայեցողութեամբ դիտէ Թէ
ուստի իցէ ծագումն այնր վրոյովման ,
և տեղեկացեալ քոջապէս Թէ առ
տգիտութեանն յոչ կամաց ընկերին
Թելադրեցաւ , յուչ անէ անդէն բը
մարդկութիւն , և Թէ զի՛նչ պարտք են
նորա . այնուհետեւ առաջի նկարին

նմա ամենայն արարք մարդկան յոռիք
 և բարիք, յորս իմաստասիրաբար նը
 կատեալ գտանէ 'ի նոյն զընական թե
 լազրութիւն գիտակցութեան, և ա
 ղաջի ելանեն նմա համայն վճիռք բու
 թոյակաճք ցուցանել թէ զոր արժան է
 առնել, անդուստ լսելի լինի յունկն
 նորա ձայն 'Քրիստոսական քարոզու
 թեանն թէ "զոր կամիս վասն անձի
 նոր, զնոյն այլում արասցես ո : Աստ
 զանդակ ազգարար 'ի ներքս 'ի հոգեոջն
 հարկանի եթէ " արգարեւ չիք բարե
 բարութիւն արտաքոյ քան զայս, գործ
 արժանաւայել մարդոյ ո. և միահարոյն
 ծափաձայն աղաղակաւ արտաքս ընդ
 բերանն հնչեն խորհրդական անդաճք
 գաստաստանի նորա եթէ " 'ի հերուն
 հետէ փափաքեր այլ՝ մարդ և զար
 գիս եզիտ և Նանեա ո : Այսն զի 'ի
 բնութեան չիք զգրութիւն անգործ, և
 զի քցութիւն զգրութեան բաղձանաց
 լինելն 'ի մարդ անժխտելի իմն է ճըճ
 մարտութիւն, ուստի յորժամ զը
 բութիւնք բաղձանաց վայելչականին՝
 յաղթեացէ թերազրութեանց ոչ վա
 յելչականին, 'ի բերկրութիւն համա
 կի անձն համայն ընդ արժանասորու
 թիւն գործոյն, տեղէ տան անդէն
 կիրք ազգի ազգի չարեաց թերազրիւք.
 'ի բաց բառնի սոգրութիւնն հան
 դերձ ամենայն հետեւութեամբք
 իւրովք. չունի անդ էութիւն թըճ
 աւաութիւն և սերտուլք նորա. ու ի
 տեն դատաւորք մոտց չթորու
 երբէք 'ի ձեռաց զվայելչագործու
 թիւնն, որ զայն բերկրութիւն (ս
 բում անձկայք 'ի սկզբանէ) յինքն առ
 թեաց. և զի բուն մաթ վայելչագոր
 ծութեան մարդոյ է մարդասիրութիւ
 նն 'ի ներքս մուցեալ, զգրութիւն
 զգենու ընդդէմ ատելութեան որով
 աստեան մարդիկ զնմանիս իւրեանց,
 արմատախիլ Ընկեալ յոչնչ գրէ զնա

որ վարենի գաղանաց միայն է ներելի
 ինչ սահմանաւ իւրոյ մարդկութեա
 նն մտանէ այնուհետեւ մարդ որ ան
 զուգական է մեծութիւն տնտազե
 լի, անց ընկեր զնկեր սղագարեաց
 գրկախտու համբարիս սիրոյ վայն
 լն բերկրութիւն անսպառ, ուր յան
 գի ճշմարտն երջանկութիւն :


Անձառելի է այս յուեթ բերկ
 րութիւն, զոր 'ի նուաճիլ բարկու
 թեան զգայ երկայնամիտն 'ի սրտին.
 թէպէտ և տանեակ իյէ լեզու եւ
 բարբառ, որոյ կամք իյեն ձառեց
 զարդեանց և զհեշտին զգացմանց հաճ
 բերաղին, բայց նմանութեամբ մարթի
 յայտնել փոքր 'ի շատէ և ծանօթու
 թիւն ինչ տալ զնմանէ այլում. ուստի
 առ 'ի պարզել սակաւ ինչ զգաղափար
 այս բերկրութե՛ հայեցուք 'ի գալս
 պատեբազմի. զի սրպէս անց զորտվ
 թն որ յերկբայ լեւո վասն յաղթու
 թեան զու իւք և գուշազրութիւն
 հնարի 'ի ձեռս անել նկատելով բէ
 հանգամանս թնամնոյն երբե՞ն պար
 տութեան և ամենայն անձամբ զհե
 սնդի յաղթութեան, տապնապեալ
 'ի ծփանս խորհրդոց անգագար ըն
 թանայ յալ և յահեակ, գոռայ. իք
 բախոյս առ զօրականս կարդայ, փոք
 յաղթութե՛ կամի հարկանել. և լքանի՝
 զբանակն 'ի փախուստ տեսեալ և ըզ
 թնամին զհետ նորա պնդեալ : Ահ
 բրտտին զօրանայ 'ի տեսանելն զի բա
 նակն փախոսական արիական իմն սրբ
 տասնդութեամբ վառահայեալ ի յայ
 թութիւն գիտէ 'ի վերայ թնամնոյն
 անվիհեր սրտիւ որպէս սղանայ թազէ
 'ի վերայ տասրակի խուսելոյ 'ի մագ
 բաց անտի նորա, և հասեալ 'ի վերայ՝
 պատեբազմեալ բաջակտով բազիզ իւ
 բովք ընդդէմ զգրութեան թնամնոյն
 ստանայ զյաղթութիւն ամենայնիւ
 պարտեալ զթնամին : Աստ անա ծա

գեղաւ բերկրութիւն տնմեկնելն ՚ի սիրտ պարտադին և տրամութիւն ան նկարելի խոցեաց զսիրտ պարտելոյն . այսպէս և երկայնամիսն բազում ճըլ գամբ ընդդէմ բարկութեան օգործեալ , հուսկ Եւրոմն ասնձեալ նուաճէ եւ բերկրութիւն անձաւ զգայ ՚ի որբ տին . և որ անմիտն է և իւրով անասնձ բարկութեամբ տրամտութիւն անձին բերէ : Ու ստի որպէս իոյս տայ զօրս վոր ՚ի պարտութենէ խանդակաթ ընդ յայթաութիւն , պրպէս և մարդ պարտի սանձել զբարկութիւն թէեւ յան շափս գրգռեալ իցէ խուսելով իմն յերեաց շարութեանցն որք հետեւ որդք են նմին :

Այսպէս և Աբիլէս , որոյ զօրութեանն չէք հնար զդէմ ունել , ՚ի մարտին Տրովադայ ՚ի զայրոյթ շարժեալ ընդ զդիանս Ատրիդեայ Ագամեմեոնայն արքայի , սանձեաց զիրտացին զայն զայրոյթ պատեննին յանձնեալ զսուր , զոր եհան երգեմն անտի բարկութիւնն բորբոքեալ արտաել զպատիւ և յարգանձին իւրոյ սպառեալ զկեանս արքային , որ այսու զիջմամբ հանդարտութեանն կրկնապատկեաց զուրբ անձին , մինչեւ յոլոք արկանել զգետ արքայն անբարտաւան որ ՚ի նպաստմարտին զհզօր բազում նորա յօգնութիւն աղեքսէր ՚ի պարձանս մարդկութեան , յորոց իսկ գովեալ դրուատեցաւ ՚ի գարձս իւր արժանաւ որ հանդ խացեալ .

Օպս բան Հովերի ՚Կաւիթ իսկ հաստատեաց յասելն թէ՛ « Ըարկանայք և մի մեղանէք » , որ է սանել ջատաւմն ձեր լիցի ՚ի պաշտպանութիւն և ոչ ՚ի վրէժմանցրութիւն : Եւ Տէրն մեր Քրիստոս յաստուածային քարոզութիւնս իւր ասուել էւս ետ հաստատութիւն ճշմարտութեանս այսորիկ ամենագիտութեամբ իւրով թէ՛ « Ամենայն որ բարկանայ եղբօր իւրում աստուայսրուց , պարտաւոր լիցի դատարանիդ : Օպս ստաց Տէրն ընդ նորինի պատարանին » , որ հրեա մայէ մի սպանանել , զի գիտէր թէ բարկութեան են ծնունդք ամենայն մարդուգանութիւնք և այլ բազում շարիք :

Մարդ որովհետեւ մարդիկ բանականութեամբն ճանաչեն զբարի , եւ ամենայն զօրութեամբ իւրեանց խոցտան յանբանութենէ , և այսմ ամենայնի խորհուրդն է միայն որոշիչ , ուստի զօգտակարն գործել սլարտին մարդիկ զխտութեամբ առ ՚ի տարբերիք յանբանից , և զի երկայնմտութիւն և անդ որութիւն պատի է զարթուցիչ խորհրդոց բանին . և միակ միջոց բարեգործութեան , ապա երկայնմտութեան և հանդարտութեան պէտք են մարդկան առ ՚ի գործել զբարի , եւ եթէ երկայնմտութեան պէտք են ՚ի բարեգործել , ապա սանձել արժան է զբարկութիւն թէպէտ և ՚ի գործինան բորբոքեալ , զի ՚ի բարկութեան չիք տեղի բանին , և որ չիցէ բանին խորհուրդ , ամենայն ինչ անասնական են անգ , զի ոչ մարդ » այլ բնադրու մն շարժիչ և գործող :



* Քան զտխարէ սրտմտոցն է երանն զտխարէս ուղղել ու
Ռանն *

Որովհետեւ բնաւ չսխալին անկարելի ըլլալով զձեռոյն ստորոք ըլլալն աշխարհս փորձով ուսած է և ընդգծած նա՛մ , ուստի և վճարմք է թէ քիչ անգ զամ սխալին պիտի ըլլայ իմաստութիւնք , նորին հետամուտ եղողներք միշտ պիտի ջանան որ շատ անգամ սխալելէ ազատ մնան . և այս ինչով և է թէ ոչ սխալն սեպիւրով : Ըստ որում

արդէն սխալելէ ազատ չեմք, որովհետեւ անոքս եւ տգէտ մտններով ամենեւին ք փորձով միայն կը ստիջիմք բարին ու չարը կամ թէ ըսել նոյն ինքն մարդկութիւնը ։ Իսկին մը հետեւեալ թիւնը զոր չեմք գիտեր եւ կը գործեմք, մեզ անձանտթ է . եւ կը հետեւի որ մեր յուսացածին հակառակն ալ յառաջ գայ, որ սխալմք է ։ Սխալմանց վնասը ձեռք կը բերուի ժամանակին զոյն տղղելով, բայց ասոր մէկ մեծ պայման մի եւս կայ որով միայն կրննամք շահաւոր ըլլալ, այն է փորձառութիւննիս երբէք չմոռնալ սխալածնիս միտք պահելով միշտ ։ Երբ այս առաւոր սխալը կը մոռնամք վաղը, հետեւեալ օրը վերստին անոր մէջ ընկնելու փտանդը կը պատրաստեմք մեզ ։

Չսխալիլը կամ շատ քիչ սխալիլը շատ դժուար է . սակայն կ'ըսէ « Լ. խտառութիւն ամենայնի յաղթող է ու նա մը չէր ազատէր երբէք եթէ երկինք նորս կողմը շանթ արձակէր, սակայն կը տեսնեմք հաս փորձով որ շանթի մը վտանգէն անվնաս կ'ազատի նա մը միայն մագնիսով մը, այսպէս եւս եթէ գիտես աշխատիլ, գիտես եւ վայելել, այս է շխալիլ շատ . « Արդարին աշխատութիւնը, դարարին անդ եւ վայելք ու, վասն զի աշխատութիւնն է վայելքներու մագնիսը ։ Չսխալիլ եւ վայելել հաւասարապատիւ պիտի համարինք ։ Արամբասանք եւ կը բամբաստինք, եւ ինչո՞ւ չեմք վայելիլ ։ Երդէն բամբասել եթէ քիչ մը իրաւամբ է սխալ մը ճանաչել ըսել է, եւ սխալը ճանաչելուն պիտի հետեւի վայելելը, եւ երբ չհետեւիր, քսել է որ աշխատութիւնը դադարած է . ուսանց աշխատելու հաց սնգամ չկայ, որ մարդուս կենաց պիտոյքներու առաջինն ու ամենակարեւորն է . եթէ առարկելու ըլլամք որ ծոյլերը չեն աշ

խատիր եւ կ'ապրին, սխալ է . բայց միայն ծոյլերն ապորինաւոր եւ տգէղ կ'աշխատին ։ Հետեւեալդէս ապորինաւոր եւ տգէղ կ'ապրին ։ Իրեն համար աշխատութիւն մ'է ըս. եւ անչարք կենալը, որով կ'աշխատի համարել տեսնողը թէ կը պարտաւորին անոր որք միլ . եւ այս ողորմութիւնն անխարելէ ըլլալ ։ Եթէ խղճմտանքնին չարմիք ։

Նաւարիկ կ'ըսէ թագաւորն ինչ կաւ կանգնեցու պաշտօնեայն, եւ ահաւասիկ պաշտօնեայն ինչաւ թագաւորն յարեալ ։ Թագաւոր' որ ըսել է փողփողեան կենաց վոյթ թագ ըլլալ գեցող, կը մերկանայ նոյն թագը բնապէս, երբ շտրհիբ օրինաւորապէս նոյն թագն զգեցուցանող փողփողեան կենարը ։ Ատն զի թագն է նոյս կեանքը . երբ կենարը վտանգուելու ըլլալ, կ'արատի մանաւանդ թէ կը նուազեւ կենարը ։ Սակայն քնչպէս կ'ինկնայ եւ քնչպէս կը կանգնի, պատմութիւնն ներք ասոր շատ օրինակները կը դատմեն մեզ, որ թագաւորը որ եւ ինչ տկարութենէ մի ստիպեալ ուրիշ անձի մը վաստահացու իւր խորհելքը եւ նա անուղիչ խորհեցաւ հարկաւ ։ որ փողփողեան կենարը վնասուեցաւ ։ եւ այս ինչո՞ւ . « Վասն զի վարձկան է եւ չէ փոյթ նմա վասն սխտարայն ու Իրեն միայն մէկ սխտար պատրաստելու համար կրնայ զհել նա թագաւորին կամ ուրիշին հարբուր կամ հազար ոչ խորները եւ « չէ փոյթ նմա » ։

Մտնք' որ իրենց գործն ուրիշին յանձնելու հարկին տակն են ։ Թող զգուշանան, ընտրութիւն ընելը բաւական ծանր գործ է . այսչափ բիրտաւոր անձանց միջօնաւոր յատկութիւնն իրեր պէտք է զննել իմանալ . եւ այս ինչով, եթէ ոչ կենցաղավարութեամբ ինչպէս սր յննեան կ'ուսուցանէ ։ Եթէ' առանց երբէք բննելու պիտի յանձ

նես գործ մը մեկու մը , ալ այնուհետեւ տեւ անհոգ եղիւր կամ պիտի կործանուիս կամ կանգնիս . որովհետեւ շատ գոգարաւ պիտի պատահի որ նայն միաս Պատմութիւնը քաջուպէս եւս կը հաստատեի ինչ որ կը լսես ընթերցող :

Ըստ Պատմութեան կը ջանայ կորսնցնել զՎիտիլէս նենգաւորին Տիմոկրատայ գործակցութեամբ , և այս ինչ չու , որպէս զի Իդոմենէս ինկնայ և ինքը նշանաւոր գործ մը գործած ըլլայ որ միակ է անորէնու թիւն . Սա կայն ինչ օգուտ , եթէ ոչ լ'ձեռնաս գէթ ժամանակը պիտի յայտնէ նոր Իդոմենէսներու նորատեսակ Պատմականները :

Եթէ ինչպէս որ կ'ըստի այնպէս ալ շարունակելու յաջողութիւն մը ձեռք բերէ Պատմագիրս մը , աշխարհ այնուհետեւ շատ հեծեալ է , սակայն նայն ինքն թագաւորաց կարգէն եզող բռնաւորները չյաջողեցան նոյնը ձեռք բերելու . ուր կը մնայ ատորին կարգէ յառաջ եկած նուազ պաշտօնեայ մը . քանի որ աշխարհը փոփոխութեան ենթակայ է և մասնաւոր օրօրեան զարթուելն և օգարմանակ . որ ինչպէս կ'ուսանիմք փարձով մեկէն 'ի մեկ եւ գրեթէ յանկարծ ձեռք կը բերէ իւր վտանգաւորը : Զարցնելու կէտ մի եւս կայ :

Լյայտի հասարակութեան մը վըտանգ բերող Պատմագիրսներուն ինչու այնչափ քաջոր է և փափարելի միշտ իրենց կրիքը շաւղին մէջ յառաջանալու զգացումը , և ինչու երբէք չեն դազեր մեզմանալ և չեն ալ մեղմանար իսկ . այլ մեկէն 'ի մեկ կը գահալիմին գրեթէ բարձր կայանք նէն . Վասն զի սքստ խաբելով կ'ըսիր սին յառաջել . և իրենց այս խաբէութիւնը (անգամ մի յաջողեցին վերջը) ամենայն փութով կը ջանան երեւան

չհանել , և աղէկ կը թելադրէ իրենց բնութիւնը ինչ եղանակաւ կրնան աւելի դիւրաւ յաջողիլ իրենց նենգաւոր խաբէութիւնը յօգուտ անձանց գործածել պատրելով փոտոլաց տեսութիւնը , իրենց կրիքը կ'ըստին յագեցնելու նախ տկարներու վրայ , որոնք չգիտեն իրաւունք պահանջել և խաբէութիւն յայտնել կամ լուս եւ ըսել նենգաւորներ իսպառակել , կը ճնշեն երկրորդ անգամու . կը լռեցնեն երրորդ անգամին , այնպէս որ տեսածնուն պէս փախչին այսպիսեաց գէմբէն լյայտէս յաջողեցին յետոյ կ'սպաննել կրորդ կարգի մը , առանց շարքին մէջ տեսնելով գուցէ մէկ քանինքը , որ գիտեն անոնց պատասխանել , և ատենի մը առջեւ իրենց արարքը դատեն , գիտեն ուրիշ միջոցաւ մը այսպիսիներն ալ խորդաւանել . և այս ուրիշ միջոց մը չէ , բայց եթէ նպատակ անոնց պէտք մը կարօտութիւն մը ունեցած ժամանակին զայն հոգալով , աղիքին ալ անիմաստ մարդ մը շխորհիւր երբէք իւր արժէքը , և կարօտութենէն ստիպեալ նպատակ մը ընդունելով , նայն ինչքին նպատողին կը գողնէ իւր հարուստապատիկ իրաւունքը . և կը լռէ գարձեալ , և ոչ միայն կը լռէ , այլ կը ջանայ ևս իւր գործերովն անոր իրաւունք ալ տալ . անմիտ : Լյոյն , ընդունեցիր նպատակ մը , սակայն այսուհետեւ նոյն ընդունածիդ հարիւրապատիկը աւար սուլու վտանգին մէջ կը զոնուիս , Բնչ շահ է քեզ մէկ աւելի աւելու և հարիւր աւելի տու ժելլաւաւելի խիւղայիութիւնն այն է որ զգուշանաս քու իրաւանցդ , երբէք զգող ջնջելէ ետքը , անոր յոյսն ալ բոլորովին կորես , հոգ չէ եթէ նա յուսահատ մեռնելու ալ ըլլայ , վասն զի ինչպէս տգիտութեամբ մեկուս հարիւր տու ժելն երախտագիտութիւն չէ :

այսպէս ալ գիտութեամբ մեկուն հարիւր շտապու զգուշութիւնք ապե-
րախտութիւն չէ, գու ինչոն կը վախ-
նաս, հասարակաց կործիրքն, որ զքեզ
չգառապարտեն, ոչ, ամենեւին ոչ,
հասարակաց քատաղութիւնն է միայն
որ ամենուս ալ կարծեացն ունկնդիր
ըլլալ կը ջանաց ազդելով:

Կան գարձեալ կարգ մը մարդիկ,
որոնք էապէս գիտեն թէ ինչ կը գոր-
ծուի քաղաքին մէջ, տարիցն անոնք ալ
երկայնամիտ ըլլալով բուռական ուշ կը
յայտնեն իրենց կարծիքը թէ ինչպէս
կը ճանաչեն գործածը, թող ճգնի
ներեզողը ճանչնելու թէ իրեն տեսած
գործը տեսնող մը չկայ. նորք քաջ գի-
տեն որ իրմէն աղէկ գործողներ ալ
կան, սակայն լուսութիւնն է որ իրեն
արձակ ժամանակ տուած է ամեն կող-
ման գլուխ զարնելու:

Իրաւունք ունկը չյազենալու ըն-
թերցող, որովհետեւ ծածուկ խօսքե-
րը յապուրդ մը չեն տար, մանաւանդ
թէ կը տագնապեն ալ. ուստի քեզ բաց
պիտի զուրցեմ որ մեր քաղաքը գու-
մար մը ունի որով տարուէ տարի իւր
հարկը պիտի վճարէ, սակայն իրեն
այս որոշումը չգործադրուելէ զսա վը-
տանգի մէջ ալ է: Բստ որում չը կըր-
նար հասարակութիւնը խառն 'ի խա-
ռըն անոր հոգը տանիլ, յանձնած է
իւր կողմէն յանձնաժողովի մը, և այ-
սոր յանձնաժողովը փոխանակ ջանա-
ու որ գու մարն իւր գործը լմնցնելէն
վերջը հետզհետեւ աւելնայ, այնպէս
մ' աշխատած է որ շահելիքը կըր-
նընցնելէն յետոյ, որուն հասարակու-
թիւնը թերեւ կրնայ առանց նեղա-
նալու ալ ներդրամիտ ըլլալ, գրամա-
գլուխը եւս ջնջեր է բոլորովն:

Իւր մնաց հապա սորա շահը, որ
կը կարծէր թէ հասարակութեան օգ-
տին միայն կ'աշխատի, և կը գանգաւ

տէր իսկ որ հասարակութիւնն իր յար-
գը չէր ճանաչէր: Ընմիտ, կը կարծէիր
որ հասարակութիւնը խորհելու կար-
ողութենէ ամենեւին զուրկ է, և եթէ
պատառն անգամ ուտէիր պիտի չխա-
սի ու չկարենայ խօսիլ: Սակայն այսօր
կը տեսնես և փորձով կը համոզուիս
որ հասարակութիւնն իր հաշիւն ու-
ղիլ գիտե և կ'ուղէ, և գու ես որ
ոչ կրնաս փախել և ոչ կրնաս հաշիւն
ներկայանալ. տարակուսած էք թեր-
եւս թէ ինչ պիտի ընէք. « Ռ ինչ ա-
բարից զի տէր լո՛մ հանէ զանտեսու-
թիւնս, գործել ո՛չ կարեմ, մուրանալ
ամաչեմ »: Ե՛ր տարակուսիք երբէք,
այն ամբարտաւան պարծանքը մէկ դի-
ւրէք, ահա այնուհետեւ հասարակու-
թիւնը կրնայ Չեզ ներդրամիտ ըլլող
Չեր թերին մեծանձնութեամբ մը, և
Չեզմէ աւելի կարող յանձնաժողովի
յանձնելով իւր գործը զոր գրեթէ
բոլորովին անչացուցիք, ըստ ժամու-
պահանջէ այնուհետեւ իւր հաշիւը
և ստանայ ըստ կանոնի, եթէ ոչ մինչ
չեւ հիմակուան ճանապարհի ելքը, ու
բուն տեղեկացաւ այսօր, ուրիշ բան
չէր եթէ ոչ ջնջու մն իւր դրամագրե-
խոյն, որ միակ էր իւր կենաց պատ-
րաստութիւնը. և որուն գործադրու-
թեանը միջոցին սխալեցաւ մեծապէս
« Քան զպիտուել պանծագոյն է երբե-
մն զպիտանա ուղղել »: Քանի 'ի դէպ
կու գայ քեզ արգոյ հասարակութիւն
Ռոյէնի այս կարճ ու երկայն խօսքը.
կարճ, ըստ որում վեց կամ եօթն բա-
ւերէ կը բաղկանայ. երկայն, ըստ ու-
րում բազմաժամանակեաց և երկայն
փորձաւութեանց տրդիւնք ըլլալով,
մեծամեծ արդեանց է արտադրիչ. ու
բուն հետեւողները միշտ շահելով
կրկին կրկին խրատներ արձանագրած
են իրենց օպագայ անընդոյ. թէ ան-
կարելի է մարդկանց համար չպիտուել:

մանաւանդ մեծամեծայ համար, ըստ որում նոցա գործը մարդկանց հետն ըլլալով, այսինքն շատերուն առանձին առանձին տեսնելիք գործը միայնակ տեսնելու և կառավարելու վիճակած ըլլալով, և այնչափ մարդիկ ալ ըստ որում ուրոյն ուրոյն հասարակութենէ գաղտնի եղած իրենց մտայ բացարձակ հրամանին կը հնազանդին անշուշտ, գործը կը ծանրանայ այն աստիճան որ երբէք չէ յուսացուած, և չիրնար յուսացուիլ. զոր օրինակ կը կարծեմք որ այս ինչ մարդ մը այս ինչ գործի մը մէջ 13 կարողութիւն ունի. և այժմ ինչ գործն ալ 5 ջորութիւն ունի, մեր վստահութեանը մէջ կը բազդատեմք թէ ասոր հետեւութիւնը $13 \times 5 = 65$ որքիչ պիտի ունենայ. Սակայն հետեւութիւնը 45 կը տեսնեմք, այսինքն 20 նուազ քան զառաջինն, ըստ որում մարդուն կարողութիւնը որ 13 ըլլալ կը վստահացնէր զմեզ, կամ չէր այնչափ, և կամ իւր կարողութեան 4 ալ ուրիշ բան մը արտադրելու տուած էր զոր մենք չէինք գիտեր, ահաւասիկ խաբուիլ, կամ սխալելն այս է, (9 բուն կարողութիւն $\times 5$ ջորութիւն գործոյն, = 45 անխալելի կէտերութիւն է. իսկ 13 վստահութեան կարծիք $\times 5$ ջորութիւն գործոյն, = 65 ստաբ յոյս):

Աւստի կը մնայ մեզ հնոց փորձառութիւնը, կամ մեր առաջին սխալը յօգուտ մեր մնացեալ ժամանակացը գործել, որով կորսնցունելէ ազատ մնամք: (Յուսահատիլը վնասի նշան է, նմանապէս ալ անզգոյշ վստահութիւն ոչ սակաւ վնասուց պատճառ. ուստի այս երկուքին միջակէտը գտնելու է, որ է զգուշաւոր վստահութիւն, աչալուրջ հսկողութիւն, ըստ ժամու քրն նութիւն է):

Այս դուք քաղաքացիք մեր, որ ձայներնիդ այնչափ բարձրացուցիք մինչև երկնից կամարին տակ ամերըր խոս.

վերու չափ, ահա յարմոր ժամանակ, ջանք մի խնայէք երբէք ձեր սխալը յօգուտ հասարակութեան գործել: որով պիտի կարենաք երջանիկ օրինակ մը տալ ձեր ասպագային: Միշտ ջանալու և աշխատելու է միայն, այնուհետեւ հետեւութիւնն յաջող է. 2 ոգ չէ որ հարիւրին մէկ մէջերնիդ նենգաւոր մը գտնուելով ձեր աշխատութիւնը փճայնել ջանայ իր ճաշաւ կոցն յագուող մը տալու համար, ինչպէս որ իշամեղուն մեղուաց փեթակ մը մտնելով. . . . (Ննոց եղիք այն պիտիները պիտի վերջանան ճաշակներն առնելու պատրաստուելով, դեռ չը յագեցած՝ պատռանին բերաններն պիտի վերջանան: Չկորսնցուցած շահիլը քիչ կորսնցունելով շատ շահիլէն աւելի լաւ կը դատին ունակք):

Այս եթէ ունիմք ճշմարտութեան սիրող ոգի, մենք եւս այնպէս պիտի դատուիմք արդեօք. միայն մեր քրտանց արդիւնքովը բաւականանալով, զոր միայն կրնայ փայլել մարդ մը խզճի մը ասօք և արգարապէս: (Այս դէպքը դրած եմք այս տեղ որպէս զի շատերը օգուտ քայլին, այսինքն աննք ուր որ այս փորձն առած չեն, վերոյգրեալ քաղաքացեաց փորձառութեամբը շահեն: Այսն շատ ընկերութիւններ, որոնք վաճաղան նպատակներ ունին շահելու. անձնական շահուց աշխատող ընկերութիւնները աւելի քիչ անգամ կը պատահին որ այս տեսակ կորուստ տան. քոյց հասարակութեան մը շահը իրեն նպատակ ունեցող ընկերութիւնք աւելի շատ կրնան հանդիպիլ այս տեսակ վտանգներու. ըստ որում եթէ միայն մէկ անհատ գտնուի իւր իրում բին մէջ անձնասէր, նա կրնայ չուսայցուած վնասներ յարուցանել: (Այս մէ միայն զգուշութեամբ կը յաջողի ազատ մնալ):

կան խօսքեր որոնցմէ չար կը հե-
տեւի . կան ալ շատ խօսքեր որոնցմէ
բարիք կը հետեւի . սակայն իմաստու-
նը կրնայ ասոնց ամենն ալ 'ի բարին
գործածել և շահիլ :



Ժ.ԱՄԵՆԵԿԸ ԳՐԱԿԸՆՔ

Յօդպէէն մինչեւ Ս . Քաղաքս
սկսուած կառուղին ըստ կարեւրոյն
ուարած է , և հիմա մնացած է միայն
կառքերու բանիլը , որ զանազան ա-
ռիթներով չը շարունակուիր անընդ-
հատ , որուն համար քաղաքիս կառա-
վարիչ Վ սեմ . Քեամիլ փաշան խոր
հեցաւ այն ճանապարհի կառաց գոր-
ծադրութիւնն ընկերութեան մը յանձ-
նել որ անընդհատ շարունակէ 'ի շիւ-
րութիւն ճանապարհորդաց : Կաււս
պատրաստուած է պայմանագրութիւն
մը , և կրնայ գործը վրան առնուլ ու-
զող անձ մը իւր կողմէն ևս եթէ ունի
պայմաններ՝ հաղորդել կառավարու-
թեան : Լ'հաւաստիկ պայմանաց թարգ-
մանութիւնը կը գնեիր ամբողջ ընթեր-
ցողաց ներկայացնելու համար :

1 . Ով որ ուզէ Լըուսաղէմայ և
Լաֆայի մէջ տեղ եղած ճանապարհին
ձեռնարկութիւն ընելպէտք է որ գիմէ
Լըուսաղէմայ քաղաքային հասարակու-
թեան տեսչութեան :

2 . Յիշեալ տեսչութեանէն կ'ընդու-
նի ճանապարհը արդի դրութեամբ ,
նաեւ կառաց 3 կայարանները , որոնց
մին Լըուսաղէմ , միւսը Պապրլիտ
կամ Պոլազ ըսուած տեղը , և երրորդ
Լաֆայ . նմանապէս 3 փոքր հին և 2
մեծ կառքեր , իրենց բոլոր անօթնե-
րով ու գործիքներով միատեղ :

3 . Ճանապարհին անցնող անա-
նոց հարկը , նսեւ . կառքով ճանապար-

հորդող անձանց վարձն ալ ձեռնար-
կողին պիտի հատուցուին . Ճանապար-
հորդք կառքին առաջին աստիճանին
50 զուրուշ տալու են , 27ին 30 զու-
րուշ , փոքր տղայք մինչեւ 6 տարե-
կան՝ ձրի պիտի անցնին , 6էն մինչեւ
12 տարեկանները կէս վարձ պիտի հա-
տուցանեն : Եւստիւս որեւալ անասնոց
ալ՝ ուղտին 60 փարայ , ձի կամ ջրիի
40 փարայ . աւանակներու 20 փարայ
հատուցուելու են . բեռնաւորեալ չե-
ղղներէն ալ կէս վարձը կ'ընդունի ,
խաշանց համար ալ 5 փարայ կ'ընդուն-
ուի :

4 . Ձեռնարկողը իրաւունք ունի ,
այժմ գտնուող կայարաններէն 'ի զատ
ուրիշ կայարաններ ալ շինել իւր քաւ-
կէն , ճանապարհի պիտայից համար .
շինուելիք ան դերուն արտերը կառա-
վարութեան կողմանէ ձրի կը տրուին ,
եթէ նոյն տեղերը տերութեան ըլլան :

5 . Լ'պրանայ տանիլ բերելու վարձ
հոխայի 10 փարայ հատուցանելու է :

6 . Ձեռնարկողին կողմանէ պաշա-
տն վարողները , պարտաւոր են միշտ
հաւատարմութեամբ և յարգանքովա-
րուիլ ճանապարհորդաց հետ , պատիւը
պաշտպանել , ու եթէ ասոր հակա-
ռակ բան մը նշմարուեցաւ , ձեռնար-
կողը եղած վնասուց պատասխանա-
տու է :

7 . Յիշեալ ճանապարհին գեո-
շատ պակասութիւններ գտնուելուն ,
ամենէն առաջ պարտաւոր է ձեռնար-
կողը այն պակասութիւնները լեցնել
մինչեւ որ ճանապարհը առաջին աս-
տիճանի հասնի , առանց պէտք եղած
շինութիւնները և գործողութիւն
ները 'ի գործ գնելէ դանալու , նա
եւ պարտաւոր է ամեն օր թէ Լա-
ֆայէն և թէ Լըուսաղէմէն մէյ մէկ
կառք հանել , թէ պարտաւոր ըլլան թէ
լեցուն . իսկ եթէ քննութեանէ յետոք